

## 2. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

### 2.1 ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄԸ

Ոչ առևտրային կազմակերպություններից անհրաժեշտ վիճակագրական տեղեկությունների հավաքագրման աշխատանքների ողջ գործընթացն իրականացվել է հաշվարարների կողմից, հարցումների միջոցով: Մինչ այդ, ընտրանքային հետազոտության անցկացման նպատակով, ՀՀ ԱՎԾ կողմից իրականացվել են հաշվարարների հրահանգավորման աշխատանքները, նրանց են հանձնվել դիտարկման համար անհրաժեշտ հարցաթերթերը, լրացման հրահանգները, հետազոտության համար ընտրված ոչ առևտրային կազմակերպությունների ցուցակները: Յուրաքանչյուր հաշվարար ստացել է հետազոտությանն իր մասնակցությունը վկայող վկայական, ինչպես նաև, ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության նախագահի կողմից յուրաքանչյուր ոչ առևտրային կազմակերպությանն ուղղված պաշտոնական գրություն, որի նպատակն էր տեղեկացնել վերջիններիս հանրապետությունում վիճակագրության կազմակերպման և իրենց կողմից ներկայացվող տվյալների դերի մասին, հաստատել անմիջական գործնական համագործակցություն, ինչպես նաև նվազագույնի հասցնել հետազոտության ընթացքում հարցաթերթում զետեղված հարցերին պատասխանելուց հրաժարվելու, մասնակիորեն պատասխանելու և այլ դեպքերը:

Ելնելով այն հանգամանքից, որ Հայաստանի Հանրապետությունում առաջին անգամ է անցկացվում ոչ առևտրային կազմակերպությունների հետազոտություն, առավել մեծ ուշադրություն է դարձվել հաշվարարների հետ տարվող աշխատանքներին: Ստացվող տեղեկատվության հնարավոր բարձր որակ ապահովելու նպատակով՝ ՀՀ ԱՎԾ կողմից, հարցազրուցավարների մասնակցությամբ, իրականացվել են նաև մի շարք միջոցառումներ հետազոտության անհրաժեշտության և դրա նպատակների պարզաբանման, կազմակերպությունների մասնակցության ապահովման և պրակտիկ օժանդակության ցուցաբերման նպատակով:

Հրահանգավորման ընթացքում, հաշվարարներին պարզաբանումներ են տրվել հարցաթերթի կառուցվածքի, վերջինիս առանձին բաժիններում ներառված ցուցանիշների, ինչպես նաև դրանց լրացման առանձնահատկությունների վերաբերյալ:

Հետազոտության «դաշտային» աշխատանքների ավարտից հետո հաշվարարների կողմից լրացված հարցաթերթերը ներկայացվել են ՀՀ ԱՎԾ մարզային գործակալություններ, որտեղ իրականացվել է հարցաթերթերի

թվաբանական և տրամաբանական ստուգումը: Ստուգման ենթարկվելուց հետո լրացված հարցաթերթերը ներկայացվել են ՀՀ ԱԿԾ, որտեղ և իրականացվել է դրանց մուտքագրումը՝ մուտքագրման համապատասխան ծրագրի հիման վրա: Ընդ որում, մուտքագրման աշխատանքների ժամանակ առաջացող հնարավոր տեխնիկական սխալները չեզոքացնելու նկատառումով, միևնույն հարցաթերթը մուտքագրվել է կրկնակի անգամ՝ երկու տարբեր մուտքագրողների կողմից, որից հետո մուտքագրման արդյունքները համեմատվել են համակարգչային ծրագրի միջոցով: